վերջ գրուած յիշատակարանին մէջ այս անձը կը յիշատակուի ՌԾԵ (=1606) թուին, (Դարանաղցի. էջ 603)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. (ՓՈՔՐ) ԿԱՆՉԱՑԻ.— Մբ. ՌԾԵ (= 1606) թուին Ս. Յակոբի ջահավառ և լուսարար, Գրիգոր վրդ. Դարանաղցիին ձեռագիր Աստուածաշունչի Իմաստութեան գիրքին վերջը գրուած յիշատակարանին մէջ կը յիշուի այս անձը (Դարանաղցի. էջ 602 և 605)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Կեսարիոյ 1823ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Ղարսի 1727?ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Վանի 1823ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Վանի 1767ին. Սահակ վրդ.ի եպիսկոպոսացման մասին, Սիմէոն կթղ.ին կողմէ Նամակ մը կը գրուի Վան Յովհ. քհ. Մուշաղբիւրցիին հետեւեալ տողերով. «... որպէս այժմ գրեալ էր (Յովհ. քհ.) զաղերս վասն Ս. Երուսաղիմայ նուիրակ Սահակ վրդ.ին օրհնել եպիսկոպոս, որ այժմ եկեալ էր ի Ս. Աթոռս, վերստին յօրհնել եպս. որպէս յառաջ ևս էր միանգամ եկեալ և ունայն դարձեալ զոր և այժմ ունայն դարձոյց Ս. Վեհն». (Դիւան. Գիրք Գ. էջ 747)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Վրաց 1720ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Նւ. Սսոյ և Հալէպի 1750ին, աշկ. Նալեան Յակոբ պտրք.ի, կը վախճանի ի Լաթաքիէ 1750ին (Նաւնակյանի, էջ 124)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Նւ. Սսոյ 1751ին, վախճանեալ Սահակ վրդ.ի տեղ վրդ. կը ձեռնադրէ Նալեան Յակոբ պտրք. (Նաւնակյանի էջ 260)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, Պալոնտէր պտրք.ի ժամանակ եւ կը մասնակցի ընդհ. նուիրատուութեան։

ՍԱՀԱԿ ՎՐԴ.— Մբ. Մինաս Ամդեցիին Օրագրութեան մէջ կը յիշատակուի իբր Նւ. Ամիդի և շրջակայից (1694—1701)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՇԱՏԱԽՑԻ.— Մբ. ՏՑ. 1802ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՋԱՆԱԳԻՔԱԼԷՑԻ.— Մբ. Ձո. 1803ին։